

ՀԱՎԵԼՎԱԾ

Արմեն Յ. Մարուքյան
Պատմ. գիտ. դոկտոր

ԿԱՐՍԻ 1921 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ*

Բանալի բառեր – Մոսկվայի պայմանագիր, Կարսի «պայմանագիր», Խորհրդային Ռուսաստան, քենալական Թուրքիա, Խորհրդային Հայաստան, Վրաստան, Ադրբեջան:

Մուտք

Ինչպես հայտնի է, «Բարեկամության և եղբայրության մասին» Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի (18-ի) խորհրդա-թուրքական պայմանագրի 15-րդ հոդվածով Խորհրդային Ռուսաստանը պարտավորվել էր ճնշում գործադրել Խորհրդային Հայաստանի՝ վրա, որպեսզի վերջինս համաձայնեց ընդունել տվյալ փաստաթղթով իր տարածքներից Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը Թուրքիային, իսկ Նախիջևանը Ադրբեջանին հանձնելու դրույթները: Հայտնի է նաև, որ Մոսկվայի պայմանագրի այդ հոդվածն ուղղակիորեն հակասում է միջազգային իրավունքի նորմերին: Միջազգային պայմանագրային իրավունքի նորմերն ու սկզբունքներն ամբողջացնող Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայի 52-րդ հոդվածով հստակ արձանագրվում է, որ ուժի կամ դրա կիրառման սպառնալիքի գործադրմամբ ստորագրված պայմանագրերն առ ոչինչ են²:

Մոսկվայի պայմանագրի ստորագրումից հետո Թուրքիայի արտգործնախարար Յուսուֆ Քենալը Չիչերինին ուղղված 1921 թ. հուլիսի 1-ի նոտայում հիշեցնում էր Խորհրդային Ռուսաստանի ստանձնած այդ պարտավորության մասին՝ նշելով, որ թուրքական կողմի համար խիստ ցանկալի է, որ անդրկովկասյան հանրապետությունների հետ կայանալիք խորհրդաժողովին անպայման մասնակցի Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը, որպեսզի հարկ եղած դեպքում, Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն, անհրաժեշտ ցուցումներ տա կովկասյան գործըն-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.10.2021:

1 Մոսկվայի պայմանագրի տվյալ հոդվածը գերազանցապես վերաբերում էր Խորհրդային Հայաստանին, իսկ մյուս երկու հանրապետությունների վրա ճնշում գործադրելու անհրաժեշտություն չկար, քանզի Խորհրդային Վրաստանը տարածքային չնչին կորուստներ էր կրում (Բաթումի մարզի մեծ մասը Բաթում նավահանգստով, մնում էր վերջինիս կազմում), իսկ Նախիջևանը փոխանցվում էր Խորհրդային Ադրբեջանի խնամակալությանը:

2 Տե՛ս Международное право в документах, сост. сборника Н. Т. Блатова, М., 1982, էջ 86:

կերներին՝ ռուս-թուրքական պայմանագրի՝ իրենց վերաբերող կետերն անպայմանորեն ընդունելու համար³:

Չիչերինն ընդառաջեց թուրքական կողմի ցանկությանը, և Կարս գործուղվեց Լատվիայում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Յակով Գանեցկին⁴: Այդուհանդերձ, Կարսի բանակցություններին և փաստաթղթի ստորագրմանը Գանեցկու ներկայությունն իրավական տեսանկյունից հստակություն չի մտցնում նրանում Խորհրդային Ռուսաստանի կարգավիճակի մեջ: Ի վերջո, վերջինս Կարսում ստորագրված փաստաթղթի կողմ կամ միջնորդ չէր, ուստի տվյալ պարագայում ևս Ռուսաստանի մասնակցությունը պայմանավորված էր բացառապես Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածով:

Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Յա. Գանեցկու՝ իրավական տեսանկյունից անորոշ կարգավիճակը հիմք է տալիս պնդելու, որ նա Մոսկվայի հրահանգով վերահսկում էր Կարսի խորհրդածողովում Հայաստանի ներկայացուցիչներ Ա. Մոավյանի և Պ. Մակինցյանի գործողությունները, որպեսզի որևէ կերպ չխախտվեն Մոսկվայում ձեռք բերված պայմանավորվածությունները, ինչը նույնպես միջազգային իրավունքի նորմերի կոպիտ խախտում էր: Մինչդեռ նույն՝ Վիեննայի կոնվենցիայի 51-րդ հոդվածով սահմանվում է, որ եթե պետության համար պայմանագրի պարտադիր լինելու համաձայնությունը ձեռք է բերվում նրա ներկայացուցչի նկատմամբ պարտադրանքի գործողություններով կամ սպառնալիքներով, ապա այդ համաձայնությունն իրավական ուժ ունենալ չի կարող⁵:

Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչները բոլշևիկյան քարոզչության ազդեցության տակ Կարսի փաստաթուղթը ստորագրելու պահին թերևս համոզված էին, որ դա «չարյաց փոքրագույնն» է, Խորհրդային Ռուսաստանի միջնորդությամբ Հայաստանի ու հայ ժողովրդի փրկության միակ հնարավորությունը, քանզի ՀՀ կառավարությունը 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրով արդեն տարածքային մեծ զիջումներ էր արել թուրքերին⁶: Ասվածի ապացույցը թերևս նաև այն է, որ Կարսի պայմանագրի 1-ին հոդվածով չեղյալ էին համարվում մինչ այդ ստորագրված երկկողմ պայմանագրերը⁷. այս առումով նախ և առաջ նկատի էր առնվում Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Պետք է նշել, սակայն, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրն առանց այդ էլ չունեի և չէր կարող ունենալ իրավական ուժ հետևյալ պատճառներով.

1. Պայմանագիրը հայկական կողմից ստորագրել էին արդեն տապալված կառավարության ներկայացուցիչները, որոնք դրա համար այլևս չունեին իրավասություններ:

2. Պայմանագիրը ստորագրվել էր ուժի գործադրման բացահայտ սպառնալիքի պայմաններում, և նման ճնշումն ուղղված էր ինքնորոշման իրավունքի դեմ:

3 Տե՛ս Документы внешней политики СССР, т. IV, М., 1960, էջ 256:

4 Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917)», խմբ. **Զ. Կիրակոսյան**, Եր., 1972, էջ 518:

5 Տե՛ս Международное право в документах, էջ 86:

6 Տե՛ս «Հայաստանը փաստաթղթերում», էջ 770:

7 Տե՛ս նույն տեղում, էջ 518:

3. Ալեքսանդրապոլի պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրը պետք է վավերացվեր մեկ ամսվա ընթացքում, սակայն այն ընդհանրապես չի վավերացվել⁸:

Այսպիսով, հակաիրավական լինելուց բացի, Ալեքսանդրապոլի պայմանագիրն իրավական առումով անգամ ուժի մեջ չի մտել: Մոսկվայի խորհրդատուներից մինչև Կարսն ընկած ժամանակամիջոցում Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին հիշեցնելու սպառնալիք-«փաստարկով» հայկական կողմին ապակողմնորոշելը նույնպես միջազգային իրավունքի նորմերի խախտում էր: Վիեննայի կոնվենցիայի 49-րդ հոդվածով պայմանագիրն առ ոչինչ է, եթե այն ստորագրվել է պայմանավորվող կողմի ներկայացուցչին խաբելու կամ ապակողմնորոշելու միջոցով⁹: Ի վերջո, չպետք է մոռանալ, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը նույնպես քեմալաբուլձևիկյան խաղերի և Հայաստանի վրա գործադրված երկկողմ ճնշումների հետևանք էր:

Միջազգային պայմանագրային իրավունքի նորմերի թվարկված կոպիտ խախտումները հիմք են տալիս պնդելու, որ իրավական տեսանկյունից Կարսում ստորագրված փաստաթուղթն առանձին պայմանագիր համարվել չի կարող և լավագույն դեպքում կարող է դիտվել որպես Մոսկվայի անօրինական գործարքի հավելված:

1. Քննարկումներ Կարսի խորհրդատուներին ստորագրվելիք «պայմանագրի» դրույթների շուրջ

Հայաստանի իրավունքների հաշվին քեմալականներին ընդառաջ գնալու իր գործելակերպով Խորհրդային Ռուսաստանը բավականին արտոնյալ պայմաններ ստեղծեց թուրքական պատվիրակության համար, որը Կարսի խորհրդատուների ողջ ընթացքում կոշտ և անզիջում կեցվածք էր որդեգրել, անընդհատ վկայակոչում էր Մոսկվայի պայմանագիրը և դրանից չշեղվելու փոխադարձ պայմանավորվածությունը՝ անկախ այն հանգամանքից, որ քննարկվող որոշ հարցեր տվյալ փաստաթղթում առհասարակ ներառված չէին:

Կարսի խորհրդատուներին Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ա. Մռավյանը հոկտեմբերի 10-ին Ա. Մյասնիկյանին ուղղված հեռագրում հաղորդում էր, որ թուրքերը համաձայնել են համաներում շնորհել Կովկասյան ռազմաճակատի մարտերի մասնակիցներին, սակայն առանց «հայ» բառի հիշատակման¹⁰: Թուրքական կողմը սկզբունքորեն դեմ էր փաստաթղթի նախագծի 15-րդ հոդվածում «հայ» բառի հիշատակմանը, և միայն երկար քննարկումներից հետո խմբագրված վերջնական տեքստում կողմերն ընդհանուր պարտավորություն ստանձնեցին լիակատար ներում շնորհելու մյուս կողմի քաղաքացիներին Կովկասյան ռազմաճակատում ընթացած պատերազմական գործողություններից բխող հանցանքների և զանցանքների համար¹¹:

8 Տե՛ս Թորիկան Շ., Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրուբ, 1976, էջ 107:

9 Տե՛ս Международное право в документах, էջ 86:

10 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 23, թ. 59:

11 Տե՛ս «Հայաստանը փաստաթղթերում», էջ 522-523:

Հակահայկական նույն կեցվածքը թուրքական կողմը դրսևորեց նաև պատերազմի ընթացքում, այսպես կոչված, «հակաթուրքական գործողություններ» կատարելու մեջ մեղադրվող թուրքահպատակ հայերին ներում չնորհելու հարցի քննարկման ժամանակ: Թեև մասնավոր խորհրդակցության ժամանակ թուրքական պատվիրակությունը նման պարտավորություն էր ստանձնել, սակայն հետագայում այդ խոստումը մոռացության տրվեց և Կարսի փաստաթղթի վերջնական տեքստում այդպես էլ տեղ չգտավ¹²:

Կարսի խորհրդաժողովի տնտեսական հանձնաժողովում մեծ վեճ ծագեց թուրքերի կողմից Ալեքսանդրապոլի դեպոյի թալանված գույքի վերադարձի շուրջ: Խորհրդային Հայաստանի պատվիրակությունը պահանջում էր վերադարձնել Ալեքսանդրապոլի ռազմակալման ընթացքում դեպոյի կողոպտված և դուրս տարված մեծաքանակ գույքը, իսկ թուրքերն ամեն կերպ փորձում էին շրջանցել այդ հարցը: Թուրքական պատվիրակության ղեկավար Ք. Կարաբեքիրն ի վերջո ստիպված եղավ խոստովանել, որ Ալեքսանդրապոլի դեպոյի գույքով իրենք Կարսում և Էրզրումում արհեստանոցներ են կահավորել, որոնք իբր խիստ անհրաժեշտ են իրենց պատերազմական պայմաններում¹³: Որպես այդ գույքի դիմաց հատուցում՝ թուրքական կողմը 1921 թ. հոկտեմբերի 8-ին Հայաստան ուղարկեց 3 վագոն աղ, 2 վագոն ցորեն, 40 կով և 50 ոչխար, սակայն հայկական պատվիրակությունը հրաժարվեց դա համարել Ալեքսանդրապոլի դեպոյի թալանված գույքի հարցի լուծում: Երկար քննարկումներից հետո՝ հոկտեմբերի 10-ին, այդ հարցը հանվեց օրակարգից, իսկ փոխարենը թուրքերը որոշ զիջումներ արեցին Բաթումի վերաբերյալ ընդունվելիք հռչակագրի հարցում¹⁴: Ալեքսանդրապոլի դեպոյի գույքի վերադարձի հարցի նման հանգուցալուծումը ցայտուն կերպով վկայում է, որ Կարսի խորհրդաժողովի ընթացքում Խորհրդային Հայաստանի խախտված իրավունքների վերականգնման հարցում զիջումներ կատարելու գնով թուրքերից զիջումներ էին կորզվում Խորհրդային Վրաստանի իրավունքների պաշտպանության հարցում, ինչը կատարվում էր Մոսկվայից համապատասխան ցուցումներ ստացող Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Յա. Գանեցկու հավանությամբ:

Քանի որ Կարսում ստորագրված «դե-յուրե» անօրինական փաստաթղթի հիման վրա կատարվեց Խորհրդային Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանագատումն ու սահմանագծումը, ուստի հարկ ենք համարում միջազգային իրավունքի տեսանկյունից քննության առնել դրա հողվածներն ու դրույթները: Փաստաթղթի 1-ին իսկ հոդվածով, մինչ այդ պայմանավորվող կողմերի միջև ստորագրված փաստաթղթերից բացի, ուժը կորցրած էին համարվում նաև երրորդ երկրների կնքած պայմանագրերը, որոնք վերաբերում էին անդրկովկասյան հանրապետություններին¹⁵: Քանի որ տվյալ հողվածի ձևակերպումներով բացառություն էր արվում Կարսի փաստաթղթի հիմքը կազմող Մոսկվայի պայմանագրի համար¹⁶, ուստի պարզ է դառնում, որ փորձ էր արվում չեղարկելու Սևրի պայմանագիրը: 1-ին հողվածին, սակայն, տրամազծորեն հակասում է նույն փաստաթղթի 2-րդ հողվածը, ո-

12 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 31, թ. 13:

13 Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 87:

14 Տե՛ս նույն տեղում, գ. 23, թ. 58:

15 Տե՛ս «Հայաստանը ... փաստաթղթերում», էջ 518:

16 Տե՛ս նույն տեղում, էջ 518-519:

րով «Թուրքիան համաձայնվում էր չճանաչել որևէ միջազգային պայմանագիր կամ ակտ, որը վերաբերում է Հայաստանին, Ադրբեջանին ու Վրաստանին և ճանաչված չէ այդ երկրների կառավարությունների կողմից, որոնք այսօր ներկայացնում են Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի խորհուրդներին»¹⁷: Հարկ է նշել, որ մինչև Կարսի փաստաթղթի ստորագրման պահը Խորհրդային Հայաստանը ոչ միայն չի ճանաչել Մոսկվայի պայմանագիրը, այլև բողոք է ներկայացրել Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը, որ վերջինս առանց իր մասնակցության է լուծել իր տարածքային հարցերը: Հայաստանի արտգործկոմ և պատվիրակության ղեկավար Ա. Բեկզադյանը 1921 թ. ապրիլի 15-ին այդ կապակցությամբ հայտարարություն է ուղղել Ռուսաստանի արտգործոժողկոմ Չիչերինին, իսկ մայիսի 19-ին ՀԿԿ Կենտկոմի պլենումը, լսելով Բեկզադյանի հաշվետվությունը ռուս-թուրքական բանակցություններում հայկական պատվիրակության աշխատանքների մասին, հավանություն է տվել պատվիրակության քաղաքական գծին¹⁸: **Այս փաստերի լույսի ներքո, համաձայն Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածի, Թուրքիան պետք է անվավեր ճանաչեր նաև Խորհրդային Հայաստանի կողմից մինչ այդ պահը չճանաչված Մոսկվայի պայմանագիրը, ինչը նշանակում էր, որ Կարսի փաստաթղթի 1-ին հոդվածով Մոսկվայի պայմանագրի համար բացառություն անելն անիրավաչափ էր:**

Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածը կրկնում է Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածը, որով պայմանավորվող կողմերը համաձայնում էին չճանաչել ոչ մի պայմանագիր կամ միջազգային որևէ այլ ակտ, եթե կողմերից մեկին հարկադրել են այն ընդունել¹⁹: Ինչպես արդեն նշվել է, Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը Հայաստանի նկատմամբ հարկադրանքի ամենավառ դրսևորումն էր, ուստի Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածի հիշյալ դրույթով ոչ միայն չեզոքացվում էր դրա հիմքը կազմող Մոսկվայի պայմանագիրը, այլև լիովին իմաստագրկվում էր հենց Կարսում ստորագրված փաստաթուղթը: Կարսի փաստաթղթի հոդվածների միջև առկա նման աղաղակող հակասությունները խոսում են այն մասին, որ քեմալականներն ու բոլշևիկները ինչպես Մոսկվայում, այնպես էլ Կարսում առանձնապես ջանք չեն գործադրել ոչ միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները և ոչ էլ անգամ տրամաբանության տարրական կանոնները պահպանելու հարցում: Նրանք ձգտել են ժամ առաջ «օրինականացնելու» Մոսկվայում կայացած գործարքը Կարսում Հայաստանի ներկայացուցչի ստորագրության միջոցով:

Կարսի խորհրդաժողովից վերադառնալուց հետո պայմանագիրը ստորագրած Ա. Մռավյանը «Խորհրդային Հայաստան» թերթի հոկտեմբերի 21-ի համարում նշում էր. «Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»²⁰: Նա հույս էր հայտնում, որ այդ հարցերը կլուծվեն խաղաղ և բարեկամորեն՝ Անդրկովկասի երկրների և Ռուսաստանի օժանդակությամբ: Մռավյանի այս լավատեսական կանխատեսմանը, սակայն, վիճակված չէր իրականութ-

17 Նույն տեղում, էջ 519:

18 Տե՛ս Հակոբյան Ա., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Եր., 2010, էջ 215:

19 Տե՛ս «Հայաստանը փաստաթղթերում», էջ 519:

20 Մեջբերումն ըստ Զոհրաբյան Է. Ա., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, Եր., ԵՊՀ հրատ., 1979, էջ 300:

յուն դառնալ այն պատճառով, որ, Հայաստանից բացի, անդրկովկասյան մյուս հանրապետությունները՝ Վրաստանն ու հատկապես Ադրբեջանը, ինչպես նաև Ռուսաստանը Կարսում ստորագրված փաստաթղթի դրույթներով լիովին բավարարված էին:

2. Կարսի «պայմանագրի» ստորագրումից հետո Թուրքիայի կողմից այդ փաստաթղթի դրույթների խախտումներն ու պարտավորությունների չկատարումը

Կարսի «պայմանագրի» ստորագրումից մինչև դրա վավերագրերի փոխանակումն ընկած ժամանակահատվածում արդեն պարզ դարձավ, որ թուրքական կողմը չի պատրաստվում կատարելու տվյալ փաստաթղթով հայերի և Հայաստանի իրավունքների պաշտպանությանը վերաբերող իր պարտավորությունները: Թե՛ թուրքական իշխանությունները, թե՛ գինվորական հրամանատարությունը բացարձակապես չէին կատարում Թուրքիայի տարածքից խորհրդային հանրապետությունների՝ Հայաստանի և Վրաստանի տարածքների վրա ավագակախմբերի հարձակումները կանխելու և իրենց քաղաքացիների գործողությունների համար պատասխանատվություն կրելու պարտավորությունները: Ավելին՝ թուրքական իշխանությունները հենց իրենք էին քրդական ցեղերին հրահրում նման գործողությունների: Այսպես՝ 1921 թ. նոյեմբերի 25-ի լույս 26-ի գիշերը քրդական ցեղերը Դավալու գյուղի մոտ անցել էին Կարսի փաստաթղթով որոշված թուրք-հայկական սահմանը, հարձակվել այնտեղ տեղակայված հրետանային զորամասի վրա, սպանել երկու և վիրավորել մեկ անձի՝ հափշտակելով զորամասի ձիերն ու ջորիները²¹: Այս առիթով Խորհրդային Հայաստանի արտգործոժողկոմ Ա. Մռավյանը պաշտոնական բողոքի նոտա փոխանցեց Երևանում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ներկայացուցիչ Օմար Լյուֆլի բեյին²²: Կարսում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Գ. Սարգսյանը²³ նույնպես դեկտեմբերի 6-ին բողոքի նոտա հղեց թուրքական կառավարությանը, որում նշվում էր, որ այդ ավագակախի հարձակումից անցել է 10 օր, սակայն թուրքական կողմը դեպքի առնչությամբ հետաքննություն չի իրականացրել, չի հայտնաբերել ու պատժել մեղավորներին և չի վերադարձրել այդ հարձակման հետևանքով հայերից հափշտակված անասունները²⁴:

Թուրքական իշխանությունները կոպտորեն խախտում էին նաև 16-րդ հոդվածի պահանջը, որի համաձայն՝ պայմանավորվող կողմերը պարտավորվում էին փաստաթղթի ստորագրման օրից՝ երկու ամսվա ընթացքում, միմյանց վերադարձ-

21 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 10, թ. 140:

22 1920 թ. դեկտեմբերից Թուրքիան իր լիազոր ներկայացուցչությունն ուներ Երևանում, իսկ Ալեքսանդրապոլից թուրքական զորքերի դուրսբերումից հետո այնտեղ նաև հյուպատոսություն էր հաստատել: Փետրվարյան ապստամբության ժամանակ դաշնակցականների հետ համագործակցելու մեջ մեղադրվող Թուրքիայի լիազոր ներկայացուցիչ Բահեդդինը Խորհրդային Հայաստանի իշխանությունների 1921 թ. մայիսի 12-ի որոշմամբ արտաքսվեց, և նրան փոխարինեց Լյուֆլի բեյը (տե՛ս **Ջոհրաբյան Է. Ա.**, նշվ. աշխ., էջ 244):

23 Թուրքիայում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Գ. Սարգսյանը Երևանում Թուրքիայի լիազոր ներկայացուցիչ Լյուֆլի բեյի հետ 1921 թ. օգոստոսի 27-ին մեկնեց Կարս: Թուրքական իշխանությունները տեղի հայ բնակչությանն արգելեցին օգոստոսի 31-ին մասնակցել Կարսում Խորհրդային Հայաստանի ներկայա-ցուցչության բացման արարողությանը: Թուրքական իշխանությունները մերժեցին նաև հայ ռազմագերիների վիճակին ծանոթանալու նպատակով էրզրում մեկնելու Գ. Սարգսյանի խնդրանքը (տե՛ս նույն տեղում, էջ 245-246):

24 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, գ. 1, գ. 62, թ. 140:

նել իրենց տարածքներում գտնվող նախկին ռազմագերիներին և քաղաքացիական անձանց²⁵: Այս կապակցությամբ Գ. Սարգսյանը 1921 թ. հոկտեմբերի 16-ին հայտնում էր, որ թուրքական իշխանություններն արհեստական խոչընդոտներ են ստեղծում հայ գաղթականներին և ռազմագերիներին վերադարձնելու հարցում, իսկ որակավորում ունեցող հայ մասնագետներին հարկադրաբար պահում են Բաբերդում և Էրզրումում: Խորհրդային Հայաստան վերադարձավ հայ գերիների միայն չնչին մասը՝ 688 զինվոր և սպա, մինչդեռ նրանց ընդհանուր թիվը հասնում էր 8000-ի: Որոշ տվյալներով՝ հայ ռազմագերիների մեծ մասն արդեն սպանվել կամ մահացել էր անմարդկային վերաբերմունքի և անտանելի ծանր պայմանների պատճառով²⁶: 1921 թ. դեկտեմբերի 27-ի գեկուցագրում Գ. Սարգսյանը հայտնում էր, որ գերության մեջ պահվող հայերին թուրքական իշխանությունները ստիպում էին ամրություններ կառուցել հայ-թուրքական նոր սահմանի մերձակայքում՝ Արդահանի և Կարսի շրջաններում: Այդ տաժանակիր աշխատանքները կատարելիս հայ ռազմագերիների մի մասը մահանում էր տվից, ցրտից և անմարդկային ծանր պայմանների պատճառով²⁷: Ինչ վերաբերում է տեղահանված խաղաղ հայ բնակչությանը, ապա թուրքական գերությունից վերադարձել էր նրանց մի մասը միայն²⁸:

Կարսի փաստաթղթի 13-րդ հոդվածով՝ մինչև 1918 թ. Ռուսաստանի մի մասը հանդիսացող և Թուրքիային փոխանցվող տարածքների, այսինքն՝ Կարսի, Արդահանի, Արդվիհի և Սուրմալուի շրջանների բնակիչներին իրավունք էր տրվում հրաժարվելու թուրքական քաղաքացիությունից և ազատ հեռանալու այդ շրջաններից՝ իրենց հետ վերցնելով իրենց գույքը, իրերը կամ դրանց արժեքը²⁹: Ակնհայտ է, որ տվյալ դեպքում խոսքն այդ տարածքներում բնակվող ոչ մահմեդականների, մասնավորապես հայերի մասին էր, որոնք, իրենց ֆիզիկական անվտանգությունից էլնելով, այլևս չէին կարող բնակվել այդ տարածքներում, ուստի տվյալ հոդվածով ապահովվում էր իրենց նախկին բնակավայրերից ոչ մահմեդականների և նրանց գույքի անվտանգ հեռացումը: Թուրքական իշխանությունները, սակայն, յուրովի էին ընկալել սույն հոդվածի պահանջը և փաստաթղթի ստորագրումից անմիջապես հետո սկսել էին զանգվածաբար արտաքսել իրենց իշխանության տակ անցած Կարսի, Արդահանի և Արդվիհի շրջանների քրիստոնյա և հատկապես հայ բնակչությանը: Հեռանալու համար նրանց տրվում էր ընդամենը 10 օր ժամանակ, որի ընթացքում նրանք չէին հասցնելու իրացնել իրենց անշարժ ու շարժական գույքը, որը բաժին էր հասնելու տեղի մահմեդականներին: Այս գործելաձևը, փաստորեն, երիտթուրքերի հանցավոր քաղաքականության շարունակությունն էր, երբ հայերի զանգվածային տեղահանությունն ու կոտորածն ուղեկցվում էին նրանց ամբողջ ունեցվածքի թալանով:

1922 թ. օգոստոսի 9-ից սկսվում է նշված շրջաններից հայ բնակչության արտաքսումը Ալեքսանդրապոլ, և այս կապակցությամբ օգոստոսի 16-ին Ք. Կարաբեքիրին ուղղած բողոքի նոտայում Գ. Սարգսյանը նշում էր, որ թուրքական կողմը

25 Տե՛ս «Հայաստանը փաստաթղթերում», էջ 523:

26 Տե՛ս նույն տեղում, էջ 311:

27 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 38, թ. 77-83:

28 Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 1, գ. 62, թ. 99:

29 Տե՛ս «Հայաստանը փաստաթղթերում», էջ 522:

Խորհրդային Հայաստանին չի հայտնել ո՛չ այդ տարածքների քրիստոնյա բնակչության արտաքսման պատճառները և ո՛չ էլ այդ բնակչությանն իր տարածք տեղափոխելու թույլտվություն է ստացել: Թուրքական կողմն արձագանքում է, որ նման գործողությունները լինելու են շարունակական, և այդ որոշումը ստացվել է Արևելյան ճակատի հրամանատարության շտաբից³⁰:

Կարսի փաստաթղթի 2-րդ հավելվածի համաձայն՝ Արաքսի գոտու հատվածում Թուրքիան պարտավորվել էր Ալեքսանդրապոլ-Երևան երկաթգծից 8 և 4 վերստ հեռավորությունների վրա սահմանված գոտիներում չտեղակայել կանոնավոր գորքեր³¹: Սակայն փաստաթղթի ստորագրումից անմիջապես հետո թուրքական կողմը խախտեց այդ պարտավորությունը: Գ. Սարգսյանը 1921 թ. դեկտեմբերի 27-ի զեկուցագրում ահագանգում էր, որ Ք. Կարաբեքիրի հրամանատարության տակ գտնվող գորքերը մոտեցվում են Կարսի փաստաթղթով Թուրքիային անցած՝ Խորհրդային Հայաստանին անմիջականորեն սահմանակից տարածքներում հայ ռազմագերիների ուժերով կառուցվող ամրություններին: Նախատեսվում էր Արդվին-Արդահանի շրջան ուղարկել նաև Մամախաթունում կազմավորվող թուրքական հեծյալ կորպուսը: Բացի այդ՝ դասալիքների դեմ պայքարի պատրվակով Ռուշտի փաշայի գլխավորած կորպուսը նույնպես փոխադրվելու էր Կաղզվանի շրջան, Վանի մոտ գտնվող հեծյալ դիվիզիան էլ Սարիղամիշ մեկնելու հրաման էր ստացել³²:

Ինչպես հայտնի է, Կարսի «պայմանագրի» ստորագրումից հետո Այսրկովկասի խորհրդային հանրապետությունները միավորվեցին Անդրդաշնության մեջ, ինչից ելնելով՝ ենթադրվում էր, որ փաստաթուղթը պետք է վավերացվեր Դաշնային խորհրդի կողմից, սակայն երբ Անկարայում Խորհրդային Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Ի. Աբիլովն այդ մասին հայտնեց Թուրքիայի արտգործնախարար Յու. Քենալին, վերջինս պատասխանեց, որ Թուրքիային նման վավերացումը չի բավարարում, և իրենց հատկապես անհրաժեշտ է, որ պայմանագիրը վավերացվի հենց Հայաստանի կողմից: Թուրքական իշխանությունների այս մոտեցումը բացատրվում էր նրանց այն մտավախությամբ, որ արևմտյան երկրների հետ կոնֆերանսի ժամանակ Անգլիայի կամ ԱՄՆ-ի կողմից կրկին կարող էր բարձրացվել Հայկական հարցը, և թուրքական կողմի համար կարևոր էր ձեռքի տակ ունենալ ինչպես հայ դաշնակցականների, այնպես էլ հայ կոմունիստների՝ թուրքերի հետ ստորագրած պայմանագրերը, որոնցով թուրքերը կկարողանային պաշտպանել իրենց շահերը: Յու. Քենալն ակնարկում էր, որ եթե Կարսի «պայմանագիրը» վավերացվի Անդրդաշնության դաշնային խորհրդի, այլ ոչ թե Հայաստանի կողմից, ապա արևմտյան երկրները կարող են եզրակացնել, որ սահմանի հստակեցումը եղել է ոչ թե հայ ժողովրդի կամքով, այլ մյուս երկու հանրապետությունների ճշմամբ³³: Թուրքիայի արտգործնախարարի այս դատողություններում, անշուշտ, ճշմարտություն կար, քանզի Կարսի խորհրդաժողովի ընթացքում Մոսկվայի քենալա-բոլշևիկյան գործարքից շեղվելու՝ հայկական կողմի ցանկացած քայլ հանդիպել է ոչ միայն թուրքական կողմի, այլև խորհրդային «եղբայրական» հանրապետությունների հակազդեցությանը, ուստի Կարսի փաստաթղթի ստորագրումը չի

30 Տե՛ս Զոհրաբյան Է. Ա., նշվ. աշխ., էջ 312:

31 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 18:

32 Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 38, թ. 77-83:

33 Տե՛ս Զոհրաբյան Է. Ա., նշվ. աշխ., էջ 302:

կարող համարվել Հայաստանի և հայ ժողովրդի ազատ կամքի արտահայտություն: Այլ հարց է, որ այդ իրողությունը չպետք է հասու դառնար արևմտյան տերություններին, ուստի անհրաժեշտ էր շարունակել ճնշում գործադրել Հայաստանի վրա, որ վերջինս նաև վավերացնել իրեն պարտադրված Կարսի փաստաթուղթը և այդպիսով դրա իրավական լինելու պատրանքը ստեղծեր:

Հատկանշական է, որ, Թուրքիայի հետ փոխադարձ պայմանավորվածությամբ, Կարսի պայմանագրի կողմ չհանդիսացող Խորհրդային Ռուսաստանն ավելի շուտ վավերացրեց այդ պայմանագիրը (1922 թ. մարտի 16)³⁴, քան կողմ հանդիսացող Խորհրդային Հայաստանը (1922 թ. մարտի 20)³⁵: Այդ կերպ Ռուսաստանը ջանում էր օր առաջ վերահաստատել իր հավատարմությունը Թուրքիայի հետ Մոսկվայում կնքած գործարքին:

3. Կարսի «պայմանագրի» դրույթների իրագործման նպատակով հրավիրված Թիֆլիսի խորհրդաժողովի որոշումները

Կարսի պայմանագրով նախատեսված համաձայնագրերն ու կոնվենցիաները կնքելու նպատակով 1922 թ. փետրվարի 17-ին Թիֆլիսում իր գործունեությունը սկսեց թուրք-անդրկովկասյան խորհրդաժողովը, որի շրջանակներում ձևավորված առևտրատարանցիկ և երկաթուղային հանձնաժողովների աշխատանքներին մասնակցեց նաև Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ս. Կասյանը:

Թիֆլիսի խորհրդաժողովում ընթացած երկարատև բանակցություններից և համաձայնեցումներից հետո՝ հուլիսի 9-ին, կողմերի միջև ստորագրվեցին Կարսի պայմանագրի 17-րդ հոդվածով նախատեսված «Փոստային և հեռագրային հաղորդակցության մասին» և «Երկաթուղային հաղորդակցության մասին», 11-րդ հոդվածով նախատեսված «Պայմանավորվող կողմերից մեկի իրավապահ մարմիններին մյուս կողմի տեղական իշխանությունների կողմից աջակցության ցուցաբերման մասին» և 19-րդ հոդվածով նախատեսված «Հյուպատոսական» համաձայնագրերը, իսկ վերջինիս որպես հավելված կցվեց նաև «Խնամակալության և ժառանգության մասին» համաձայնագիրը³⁶:

«Երկաթուղային հաղորդակցության մասին» համաձայնագրով պայմանավորվող կողմերի միջև հաստատվում էր Մոսկվա-Թբիլիսի-Ալեքսանդրապոլ-Կարս գծով ուղիղ երկաթուղային հաղորդակցություն: «Պայմանավորվող կողմերից մեկի իրավապահ մարմիններին մյուս կողմի տեղական իշխանությունների կողմից աջակցության ցուցաբերման մասին» համաձայնագրով կողմերը պարտավորվում էին միմյանց ցուցաբերել իրավական աջակցություն՝ կարգավորելով իրենց դատական մարմինների ընդունած ակտերի կատարման, ինչպես նաև ծանուցագրերի հանձնման կարգին վերաբերող խնդիրները:

34 Ռուսաստանն ընդհանրապես չպետք է վավերացնել Կարսի փաստաթուղթը, քանզի նա տվյալ պայմանագրի կողմ չէր հանդիսանում: Ռուսաստանի կողմից այս պայմանագրի հենց մոսկովյան գործարքի օրը վավերացումը նպատակ էր հետապնդում մեկ անգամ ևս ցույց տալու թուրքերին, որ ռուսական կողմը հավատարիմ է կայացած գործարքին, մյուս կողմից էլ ձևում գործադրելու Խորհրդային Հայաստանի վրա, որ վերջինս արագացնի իրեն պարտադրված փաստաթղթի վավերացումը:

35 Տե՛ս **Խաչատրյան Կ.**, ՀՍՍՀ սահմանների հարցը 1921 թ. խորհրդա-թուրքական հարաբերությունների ոլորտում (Մոսկվայի և Կարսի կոնֆերանսները), «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 2010, N 1-2, էջ 55:

36 Տե՛ս **Хармандарян С. В.**, Ленин и становление Закавказской Федерации, Ер., изд. «Айастан», 1969, էջ 320:

«Հյուպատոսական» և դրան կցված «Խնամակալության և ժառանգության մասին» համաձայնագրերով կողմերի միջև կարգավորվում էին հյուպատոսների նշանակման, նրանց արտոնությունների և լիազորությունների, ինչպես նաև խնամակալության և ժառանգության իրավունքներին առնչվող հարցերը: Այս կապակցությամբ նախ պետք է նշել, որ անդրկովկասյան հանրապետությունների և Թուրքիայի միջև հյուպատոսական կոնվենցիաները ստորագրվեցին ժամկետների խախտումով: Կարսի փաստաթղթի 19-րդ հոդվածով դրանք պետք է ստորագրվեին փաստաթղթի ստորագրման պահից սկսած եռամսյա ժամկետում³⁷, սակայն հյուպատոսական համաձայնագրերը ստորագրվեցին միայն հինգ ամիս անց: Բացի այդ՝ թիֆլիսյան խորհրդաժողովից կարճ ժամանակ անց Խորհրդային Հայաստանը գրկվեց Թուրքիայի տարածքում իր ներկայացուցչությունն ունենալու իրավունքից: 1922 թ. սեպտեմբերի 25-ին Թուրքիայում Խորհրդային Ադրբեջանի ներկայացուցչության գործունեության մասին հաշվետվության հիման վրա որոշում կայացվեց Ի. Աբիլովի ղեկավարությամբ այն վերածելու Անդրդաշնության ներկայացուցչության³⁸: Այս որոշմամբ Թուրքիայում Խորհրդային Հայաստանի ներկայացուցչությունը փաստորեն լուծարվում էր, իսկ Հայաստանի ներկայացուցչի կարգավիճակն իջեցվում էր խորհրդականի մակարդակի: Ակնհայտ է, որ Ադրբեջանի ներկայացուցչության հիմքի վրա ձևավորված Անդրդաշնության ներկայացուցչությունը գերազանցապես զբաղվելու էր ոչ թե Հայաստանի, այլ Ադրբեջանի շահերի ու իրավունքների պաշտպանությամբ:

Վերոնշյալ փաստաթղթերի համաձայնեցումը կատարվեց համեմատաբար արագ, և դրանք ստորագրվեցին 1922 թ. հուլիսի 9-ին, սակայն դրանից հետո Թիֆլիսի խորհրդաժողովի աշխատանքները կարծես թե կանգ առան: Թուրքական պատվիրակության կողմից ցանկացած, անգամ երկրորդական բնույթի հարց Անգորայի կառավարության հետ համաձայնեցնելու գործելաոճը հանգեցրեց նրան, որ խորհրդաժողովն արհեստականորեն ձգձգվեց³⁹:

Կարսի փաստաթղթի 6-րդ հոդվածից բխող «Տարանցիկ բեռնափոխադրումների մասին» և 18-րդ հոդվածից բխող «Առևտրային» համաձայնագրերի ստորագրումը ձգձգվում էր այն պատճառով, որ առևտրատարանցիկ հանձնաժողովի աշխատանքների ժամանակ թուրքական պատվիրակությունը փորձում էր հասնել նրան, որ Այսրկովկասում իբր թե տարանցիկ բեռնափոխադրումներով և առևտրով զբաղվող, սակայն իրականում լրտեսություն և այլ հանցագործություններ կատարող Թուրքիայի քաղաքացիները Անդրդաշնության արտակարգ դատական ատյանների կողմից պատասխանատվության չենթարկվեն: Այս խնդիրն առաջ էր եկել դեռ Կարսի խորհրդաժողովի ժամանակ, երբ փաստաթղթի թուրքական նախագծի 11-րդ հոդվածով առաջարկվում էր պայմանավորվող կողմերից մեկի քաղաքացիներին ազատել մյուս կողմի արտակարգ դատարաններում պատասխանատվության կանչվելուց: Նպատակը Այսրկովկասում հետախուզական, ինչպես նաև սադրիչ և դիվերսիոն գործունեությամբ զբաղվող թուրքական էմիսարների համար նպաստավոր պայմաններ ստեղծելն էր, ինչը մերժվեց անդրկովկասյան հանրապետությունների

37 Տե՛ս ՀԱՍ, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 16:

38 Տե՛ս Хармандарян С. В., Укрепление Закавказской Федерации в 1922 году, «Լրագրեր» հաս. գիտ., Եր., 1969, N 8, էջ 23:

39 Տե՛ս նույն տեղում, էջ 24:

պատվիրակությունների կողմից⁴⁰ : Անդրդաշնության պատվիրակության նման սկզբունքային և անզիջում դիրքորոշմանը տեղի տալով՝ թուրքական կողմը ստիպված եղավ ընդունել համաձայնագրի նախագծում տեղ գտած այդ դրույթները⁴¹ :

«Առևտրային» համաձայնագրով «Արտաքին առևտրի» միութենական կազմակերպության անդրկովկասյան բաժանմունքն անարգել գործելու իրավունք էր ստանում Թուրքիայի տարածքում, իսկ թուրք վաճառականներին թույլատրվում էր արտոնյալ պայմաններով առևտրային գործարքներ կատարել Այսրկովկասի խորհրդային առևտրական կազմակերպությունների հետ⁴² : Ակնհայտ է, որ ստորագրված համաձայնագրերից առավելապես շահում էր թուրքական կողմը, որը ցանկանում էր Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների հետ առևտրի աշխուժացման միջոցով զարգացնել Թուրքիայի կենտրոնական և արևմտյան տարածքներից տնտեսապես կտրված արևելյան նահանգները : Այս առումով պատահական չէ, որ 1921 թ. դեկտեմբերի 22-ին Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհը ժամանակավորապես կասեցրեց Թուրքիայից անտառանյութի, անասունների, անասնակերի (խոտ), աղի, հացահատիկի, կաթնամթերքի և մկնդեղի անմաքս ներմուծումը Հայաստան⁴³ : Հետագայում՝ 1922 թ. մարտի 22-ին, սկստի ունենալով մթերքի պակասը և եղածը երկրի ներսում պահելու անհրաժեշտությունը, Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը որոշում կայացրեց ընդհանրապես արգելելու երկրից մթերքի արտահանումը Թուրքիա և Իրան⁴⁴ :

Կարսի խորհրդաժողովում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ա. Մռավյանի վկայությամբ՝ թուրքերը լուրջ բանավեճերից հետո էին միայն համաձայնել փաստաթղթում ներառել 14-րդ հոդվածը⁴⁵, որով կողմերը պարտավորվում էին վեց ամսվա ընթացքում 1918-1920 թթ. պատերազմի հետևանքով գաղթածներին վերաբերող հատուկ համաձայնագիր ստորագրել⁴⁶, ընդ որում, համաձայն փաստաթղթի 20-րդ հոդվածի, տվյալ պարտավորությունն ուժի մեջ էր մտնում ոչ թե վավերագրերի փոխանակման, այլ անմիջապես փաստաթղթի ստորագրման պահից⁴⁷ :

Ի թիվս Կարսի փաստաթղթի այլ դրույթների՝ այս հարցը նույնպես պետք է հանգեցնեք կողմերի միջև համապատասխան համաձայնագրի ստորագրման, սակայն 14-րդ հոդվածին Թիֆլիսի խորհրդաժողովի ընթացքում որևէ անդրադարձ չկատարվեց : Ինքնին հասկանալի է, որ Կարսի փաստաթղթում գաղթականներին վերաբերող համաձայնագրի հոդվածի ներառման ընդդիմացող թուրքական կողմն ամեն կերպ խուսափում էր, որ այդ հարցը Թիֆլիսի խորհրդաժողովի ընթացքում քննարկման առարկա դառնա, քանզի հայ գաղթականների իրավունքների վերականգնման ու հատուցման բազում հարցեր էին ծագելու, որոնք չէին բխում քեմալականների շահերից : Անդրկովկասյան պատվիրակության՝ Վրաստանի և Ադրբեյջանի պատվիրակները շահագրգռված չէին այդ հարցով, իսկ Հայաստանի ներկայացուցիչները պատշաճ հետևողականություն չցուցաբերեցին, ուստի Կարսի պայմանագրի

40 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 24, թ. 85 :

41 Տե՛ս Խармандарян С. В., Ленин и становление Закавказской Федерации, էջ 321 :

42 Տե՛ս Զոհրաբյան Է. Ա., մշվ. աշխ., էջ 324 :

43 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 5, գ. 2, թ. 61 :

44 Տե՛ս նույն տեղում, գ. 3, թ. 31 :

45 Տե՛ս նույն տեղում, գ. 3, գ. 23, թ. 59 :

46 Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 15-16 :

47 Տե՛ս նույն տեղում, թ. 16 :

14-րդ հոդվածով կողմերի ստանձնած պարտավորությունն այդպես էլ մնաց թղթի վրա:

Ինչպես Կարսի, այնպես էլ Թիֆլիսի խորհրդաժողովների ընթացքում Թուրքիան Խորհրդային Հայաստանի նկատմամբ չէր դադարեցնում թշնամական գործողությունները: Այսպես՝ 1922 թ. մայիսի 31-ին ներքին գործերի ժողկոմը հայտնում էր, որ Խորհրդային Հայաստանի տարածք ներթափանցած թուրքական ավազակախումբը Դավալու-Շարուր-Դարալագյազ հատվածում սկսել է զբաղվել բռնություններով և թալանով, սակայն կարճ ժամանակ անց վնասազերծվել է⁴⁸:

Կարսի պայմանագրի դրույթներից ելնելով՝ 1922 թ. օգոստոսի 7-ին ստեղծվեց խորհրդա-թուրքական սահմանի դելիմիտացիայի (սահմանազատման) հանձնաժողով, իսկ սեպտեմբերի 11-ին պայմանագրի վավերացման փաստաթղթերը Երևանում փոխանակելուց հետո՝ 1922 թ. վերջին, սահմանային խառը հանձնաժողովը սկսեց իրականացնել սահմանազատման (դելիմիտացիա) և սահմանային սյուների տեղադրման (դեմարկացիա) աշխատանքները⁴⁹:

ԽՍՀՄ-ին միանալուց հետո Անդրդաշնության բոլոր իրավասությունները, այդ թվում՝ Թուրքիայի հետ կնքված համաձայնագրերով նախատեսված իրավունքները, փոխանցվեցին ԽՍՀՄ-ին: ԽՍՀՄ-ի և Թուրքիայի հետագա իրավապայմանագրային հարաբերություններում երբեմն արծարծվել են նաև Խորհրդային Հայաստանին վերաբերող հարցեր: Այսպես՝ 1961 թ. ապրիլի 27-ին ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև Անկարայում ստորագրվեց համաձայնագիր, որով վերանայվում էր ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև Լենինական-Կարս գծով երկաթուղային հաղորդակցության մասին 1922 թ. խորհրդա-թուրքական համաձայնագիրը: 1965 թ. նոյեմբերին ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև ստորագրվեց Ախուրյան գետի վրա ջրամբարի կառուցման և դրա համատեղ օգտագործման մասին խորհրդա-թուրքական համաձայնագիրը⁵⁰:

1. Թուրքիայի կողմից Կարսի «պայմանագրի» դրույթների շարունակական խախտումները

Հետագա տասնամյակներին ևս Թուրքիան շարունակեց խախտել Կարսի փաստաթղթի որոշ հոդվածներ ու դրույթներ: Այսպես, համաձայն 10-րդ հոդվածի, որը Մոսկվայի պայմանագրի 8-րդ հոդվածի կրկնությունն է, կողմերը պարտավորվել են իրենց տարածքներում արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի կամ նրա տարածքի մի մասի կառավարումն ստանձնելու հավակնություն, ինչպես նաև այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարել մյուս երկրի դեմ⁵¹: Ակնհայտ է, որ բոլշևիկների ու քենալականների համար փոխշահավետ այս դրույթն ուղղված էր Խորհրդային Հայաստանում հայ ավանդական կուսակցությունների և առաջին հերթին ՀՅ Դաշնակցության գոյությունը բացառելուն: Չնայած Կարսի փաստաթղթի այս երկկողմ պար-

48 Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 63, թ. 102:

49 Տե՛ս Хармандарян С. В., Ленин и становление Закавказской Федерации, էջ 321:

50 Տե՛ս Զորիաբյան Է. Ա., նշվ. աշխ., էջ 333:

51 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 14:

տավորությամբ՝ թուրքական իշխանությունների թույլտվությամբ Տրապիզոնում գործում էր «Իթաթ» կուսակցությունը, որի կազմում ընդգրկված էին նախկին մուսավաթականներ՝ Ղարաբաղի հայերի դահիճ Խոսրով-բեկ Սուլթանովը և ներքին գործերի նախկին նախարարի օգնական Ռուստամբեկովը: Դրանից բացի՝ Կարսում գործում էր համաթյուրքական ուղղվածություն ունեցող «Պարագլուխներ» կազմակերպությունը, որը համարված էր ինչպես նախկին մուսավաթական գործիչներով, այնպես էլ թուրքական բանակի սպաներով⁵²: Թուրքական հետագա վարչակարգերը շարունակեցին այս քաղաքական գիծը և Թուրքիայի տարածքում ոչ միայն թույլ տվեցին հակահայկական կառույցների՝ «Գորշ գայլերի» և այլ ազգայնական ու իսլամիստական կազմակերպությունների ձևավորումն ու ակտիվ գործունեությունը, այլև մինչ օրս հովանավորում են դրանց:

Կարսի փաստաթղթի 17-րդ հոդվածով կողմերը պարտավորվում էին «առանց որևէ կասեցումների ապահովել մարդկանց ու ապրանքների ազատ փոխադրումը»⁵³: Մինչդեռ Թուրքիան 1993 թվականից առ այսօր իրականացնում է Հայաստանի շրջափակումը՝ միակողմանիորեն փակելով սահմանը, ինչով խախտում է Կարսի փաստաթղթի համապատասխան հոդվածը:

Արաքսի գոտուն վերաբերող՝ Կարսի փաստաթղթի 2-րդ հավելվածի պահանջները թուրքական հաջորդ իշխանությունները խախտեցին նաև 1942-1943 թթ., երբ թուրքական զորքերը, հայ-թուրքական սահմանի մոտ կուտակված, սպասում էին Ստալինգրադի ճակատամարտի ելքին՝ Հայաստան ներխուժելու համար: Արցախյան պատերազմի ընթացքում՝ 1993 թ., Թուրքիան չբավարարվեց միայն Հայաստանի շրջափակումով, այլ կատարեց հերթական հակաօրինական քայլը, այն է՝ դիմեց «ուժի ցուցադրության»՝ սահմանի մոտ տեղակայելով թուրքական կանոնավոր զորքեր:

ԽՍՀՄ կազմալուծումից և նախկին խորհրդային հանրապետությունների անկախության հռչակումից հետո Թուրքիան արագ վերականգնեց Վրաստանի ու Ադրբեջանի հետ դիվանագիտական և պայմանագրային հարաբերությունները, որոնց իրավական հիմքը 1922 թ. թիֆլիսյան թուրք-անդրկովկասյան խորհրդածողովի շրջանակներում ստորագրված համաձայնագրերն էին: Հայաստանի պարագայում, սակայն, Թուրքիան ապակառուցողական դիրքորոշում որդեգրեց և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցում սկսեց նախապայմաններ առաջ քաշել, ինչի հետևանքով չհաջողվեց վերականգնել նույն թիֆլիսյան խորհրդածողովում Խորհրդային Հայաստանի կնքած համաձայնագրերով ձեռք բերված իրավունքները: Մինչդեռ ակնհայտ է, որ 1922 թ. ստորագրված միայն հյուպատոսական համաձայնագրի վերագործարկումն այսօր Հայաստանի Հանրապետությանն իրավական հնարավորություն կրնձեռեր պաշտպանելու Թուրքիայում գտնվող իր քաղաքացիների օրինական շահերն ու իրավունքները:

52 Տե՛ս **Զոհրաբյան Է. Ա.**, նշվ. աշխ., էջ 316-317:
53 ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 16:

Եզրակացություններ

Հիմք ընդունելով Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 49-րդ հոդվածը, ըստ որի՝ պայմանագիրն առ ոչինչ է, եթե այն ստորագրվել է պայմանավորվող կողմի ներկայացուցչի խաբեության կամ ապակողմնորոշման միջոցով, 51-րդ հոդվածը, ըստ որի՝ պայմանագիրն առ ոչինչ է, եթե պետության համար պայմանագրի պարտադիր լինելու համաձայնությունը ձեռք է բերվել նրա ներկայացուցչի նկատմամբ պարտադրանքի գործողություններով կամ սպառնալիքներով, 52-րդ հոդվածը, ըստ որի՝ պայմանագիրն առ ոչինչ է, եթե դրա ստորագրումը ուժի սպառնալիքի կամ դրա կիրառման հետևանք է, Կարսի փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության կողմից կարող է համարվել առ ոչինչ:

Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 69-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առ ոչինչ համարվող պայմանագրերն իրավական ուժ չունեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագիրն առ ոչինչ է համարվում կոնվենցիայի 49-րդ, 50-րդ, 51-րդ կամ 52-րդ հոդվածների հիմքերով, ապա նշված գործողություններում պատասխանատու կողմը որևէ պահանջի իրավունք չունի մյուս կողմի նկատմամբ⁵⁴: Սա նշանակում է, որ նշված գործողություններն ապացուցվելու դեպքում Թուրքիան ոչ մի պահանջ չի կարող ներկայացնել Հայաստանին Կարսի փաստաթղթով ստանձնած պարտավորությունների առնչությամբ: Տվյալ դեպքում Հայաստանը պարտավոր կլինի այդ մասին պաշտոնապես գրավոր տեղեկացնել պայմանագրի մյուս մասնակիցներին՝ Թուրքիային, Վրաստանին, Ադրբեջանին և Ռուսաստանին: Ընդ որում, գրավոր փաստաթղթում պետք է ոչ միայն նշված լինեն նման քայլի հիմքերը, այլև առաջարկություններ ներկայացվեն պայմանագրի հետագա ճակատագրի վերաբերյալ⁵⁵: Կարսի փաստաթղթի մասնակիցները պետք է եռամսյա ժամկետում պատասխանեն Հայաստանի գրավոր ուղերձին, իսկ կողմերի միջև հակասությունների դեպքում հարցի լուծումը պետք է հանձնվի ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանին:

Սակայն այս հարցում Վիեննայի կոնվենցիայի դրույթներով առաջնորդվելն ու դրանց հիման վրա Կարսի փաստաթուղթն առ ոչինչ հայտարարելն անուղղակիորեն կնշանակի, որ մինչ այդ քայլն անելը մենք փաստորեն ընդունել ենք դրա օրինականությունը: Ուստի Հայաստանի Հանրապետությունն այս հարցում կարող է ելնել «**Tabula rasa**» («մաքուր թղթի») սկզբունքից և առաջնորդվել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության համար միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում և դառնում ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս միայն նրա կողմից վավերացվելուց հետո⁵⁶, ինչը կնշանակի, որ ՀՀ-ի կողմից չվավերացված Կարսի փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության համար իրավական ուժ չունի:

Ինչ վերաբերում է պայմանագրային իրավունքում ընդունված վաղեմության ժամկետի՝ **Էստոպելի** սկզբունքին, ապա այդ հարցը կարգավորվում է Վիեննայի կոնվենցիայի 45-րդ հոդվածով, որում նշվում է, որ պայմանագիրը չեղյալ համարե-

54 Տե՛ս Международное право в документах, էջ 92:

55 Տե՛ս նույն տեղում, էջ 91:

56 Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված 2005 թ. նոյեմբերի 27-ին, հոդված 6, էջ 9-10:

լու կամ վերանայելու պահանջի ժամկետները համարվում են բաց թողնված այն դեպքում, երբ պահանջատեր կողմը նախկինում որոշակիորեն հարմարվել ու լռելյայն համաձայնել է կատարված փաստի հետ: Իսկ երբ կողմը որոշակի գործողություններով՝ հայտարարություններ, բողոքի նոտաներ և այլն, հայտնում է իր անհամաձայնությունը, ապա տվյալ փաստաթղթի նկատմամբ չի կարող կիրառվել վաղեմության պահանջի սկզբունքը⁵⁷: Մոսկվայի ու Կարսի փաստաթղթերի առումով վաղեմության ժամկետի պահանջը չի կարող կիրառվել, քանի որ Խորհրդային Հայաստանը դեռ 1921 թ. ապրիլի 15-ին է բողոք ներկայացրել Կարսի փաստաթղթի հիմքը կազմող Մոսկվայի անօրինական գործարքի դեմ, իսկ հետագայում՝ 1945 թ. հուլիսի 22-ին՝ Պոտսդամի խորհրդածողովի՝ կառավարությունների ղեկավարների վեցերորդ նիստի ժամանակ, ԽՍՀՄ-ը Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Վրաստանի անունից տարածքային հարց է բարձրացրել Թուրքիայի առաջ⁵⁸, պահանջելով վերադարձնել Կարսն ու Արդահանը⁵⁹, ինչը պետք է համարել Կարսի փաստաթղթի վիճարկում:

Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ հատկապես Հայաստանի կողմից Կարսում ստորագրված փաստաթղթի ընդունման հարցը բավականին արդիական էր նաև հայ-թուրքական արձանագրությունների ստորագրման վերջին գործընթացում: Մասնավորապես «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» արձանագրության մեջ նշվում էր, որ ստորագրող կողմերը վերահաստատում են երկու երկրների միջև գոյություն ունեցող սահմանի փոխադարձ ճանաչումը՝ սահմանված միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով⁶⁰: Արձանագրության տեքստում սահմանի փոխադարձ ճանաչումը ոչ թե հաստատելու, այլ վերահաստատելու հանգամանքի շեշտադրմամբ մեխանիկորեն առաջ էր քաշվում Հայաստանի կողմից Կարսի փաստաթղթի և դրա հիմքը կազմող Մոսկվայի գործարքի վերջնական ճանաչման հարցը, քանզի «փաստացի գոյություն ունեցող հայ-թուրքական սահմանի հարցը կարգավորող» այլ «պայմանագրեր» պարզապես գոյություն չունեն:

Ամփոփելով շարադրանքը՝ նշենք, որ Հայաստանի կողմից Կարսի փաստաթղթի հետևանքների չեզոքացմանն ուղղված ցանկացած քայլի կատարմանը պետք է նախորդի նախապատրաստական լուրջ աշխատանք՝ հաշվի առնելով նաև աշխարհա-

57 Տե՛ս Международное право в документах, էջ 85:

58 Հատկանշական է, որ Խորհրդային Հայաստանի արտգործո՞ղկոմ Ս. Կարապետյանը 1945 թ. մայիսի 3-ին ԽՍՀՄ արտգործո՞ղկոմի տեղակալին ներկայացրեց «Թուրքիային անցած նախկին հայկական տարածքների վերադարձի մասին» վերնագրով պաշտոնական զեկուցագիր, որում Խորհրդային Հայաստանին վերադարձվելիք տարածքների աննշույթամբ առաջարկվում էին նվազագույն, միջին և առավելագույն տարբերակներ: Նվազագույնը 1878-1914 թթ. ռուս-թուրքական սահմանի վերականգնումն էր, որի համաձայն պահանջվում էր Կարսի, Արդահանի և Սուրմալուի շրջանները վերամիավորել Խորհրդային Հայաստանին: Միջինը հիմք էր ընդունում 1878 թ. Սան Ստեֆանոյի պայմանագիրը, որով պահանջվում էր Խորհրդային Հայաստանին միացնել ռուսական բանակի կողմից գրավված տարածքները, այսինքն՝ ոչ միայն Կարսը և Արդահանը, այլև Ալաշկերտի հովիտը և Բայազետ քաղաքը: Իսկ առավելագույն տարբերակով, միջին տարբերակի հողային պահանջներից բացի, հիմք էր ընդունվում նաև վիլսոնյան իրավաբար վճիռը՝ պահանջելով այդ փաստաթղթով Հայաստանին փոխանցվելիք տարածքների կեսը՝ այն հիմնավորմամբ, որ ներգաղթի կազմակերպմամբ այդ տարածքներում կվերաբնակեցվեն տարբեր երկրներից Խորհրդային Հայաստան եկող արևմտախայերի ժառանգները: Ներկայացված տարբերակներից Խորհրդային ղեկավարությունը իրավական տեսանկյունից ավելի հիմնավորված համարեց նվազագույն տարբերակը, որն էլ Սոլուտովի կողմից ներկայացվեց Պոտսդամի խորհրդածողովին (տե՛ս **Կիրակոսյան Ա.**, Հայաստանը և սովետա-թուրքական հարաբերությունները 1945-1946 թթ., Եր., 1970):

59 Տե՛ս «Ղաշմակից երեք տերությունների՝ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը (1945 թ. հուլիսի 17 - օգոստոսի 2)», Եր., 1989, էջ 168:

60 Տե՛ս «Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ: Խորհրդարանական լսումներ 19-20 դեկտեմբերի 2007 թ.», Եր., 2011, էջ 440:

քաղաքական ու տարածաշրջանային զարգացումները: Գաղտնիք չէ, որ միջազգային իրավական նորմերն ու սկզբունքներն ազդեցիկ տերությունները ծառայեցնում են իրենց շահերին ու նպատակներին՝ երբեմն նաև խախտելով կամ իրենց ձեռնտու ձևով մեկնաբանելով դրանք: Եվ եթե նույնիսկ նրանք միջազգային հարաբերություններում իրենց կատարած գործողությունները ձգտում են հիմնավորելու միջազգային իրավունքի նորմերով ու սկզբունքներով, ապա Հայաստանի Հանրապետությունն առավել ևս չպետք է իրեն շռայլություն թույլ տա՝ հրաժարվելով պաշտպանել ոչ միայն իր, այլև ողջ հայ ժողովրդի օրինական շահերն ու իրավունքները այն հնարավորություններով, որոնք ընձեռում է միջազգային իրավունքը, մասնավորապես՝ որ մեր հարևաններն փորձում են այդ իրավունքը խեղաթուրված ձևով մեր դեմ օգտագործել:

Արմեն Յ. Մարուկյան – 60-ից ավելի գիտական հոդվածների, հայերեն, ռուսերեն և անգլերեն 10 գրքերի հեղինակ և փաստաթղթերի 4 ժողովածուների կազմող: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի պատմության, մասնավորապես՝ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության հարցերը, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրը:

Էլ. հասցե՝ mararmts@yahoo.com

Summary

IMPLEMENTATION PROCESS OF THE KARS AGREEMENT ON OCTOBER 13, 1921

Armen Ts. Marukyan

Doctor of Sciences in History

Key words-Moscow Treaty, Kars “Treaty”, Soviet Russia, Kemalist Turkey, Soviet Armenia, Georgia, Azerbaijan.

The Kars “Treaty” of 1921 was signed with a gross violation of the norms and principles of international law. The document signed in Kars made an attempt to “legalize” the previous Bolshevik-Kemalist deal in Moscow, which gives reason to consider the document signed in Kars as an annex to the illegal Moscow Treaty.

The issue of the final recognition of the document signed in Kars by Armenia still remains topical for Turkey. It is no coincidence that this issue in a veiled form was reflected in the Armenian-Turkish protocols signed on October 10, 2009 in Zurich, which were later rejected by Armenia. The protocol “On the establishment of diplomatic relations between the Republic of Armenia and the Republic of Turkey” states that “the signatories reaffirm the mutual recognition of the border existing between the two countries, established by the relevant treaties on the basis of international law”.

The signing of the Kars document led to significant losses of the Armenian territories, caused serious security problems, demographic problems and psychological

complexes, the consequences of which Armenia and the Armenian people continue to feel to this day. Before taking any steps to neutralize the grave consequences of the Kars document, Armenia should carry out consistent political and diplomatic work, taking into account geopolitical and regional processes.

It is no secret that influential powers use the norms and principles of international law in their interests and goals, sometimes violating or interpreting them in their favor. Even if influential actors of international relations try to justify their actions by the norms and principles of international law, the Republic of Armenia, as a subject of this law, is simply obliged to take advantage of the possibilities of international law, defending not only its own interests, but also the legal rights of the entire Armenian people.

Резюме

ПРОЦЕСС РЕАЛИЗАЦИИ КАРССКОГО ДОГОВОРА 13 ОКТАБРЯ 1921 ГОДА

Армен Ц. Марукян
Доктор ист. наук

Ключевые слова – Московский договор, Карсский «договор», Советская Россия, кемалистская Турция, Советская Армения, Грузия, Азербайджан.

Карсский «договор» 1921 г. был подписан с грубыми нарушениями норм и принципов международного права. Подписанным в Карсе документом была предпринята попытка «легализовать» предыдущую большевистско-кемалистскую сделку в Москве, что дает основание рассматривать подписанный в Карсе документ как приложение к незаконному Московскому договору.

Вопрос окончательного признания Арменией подписанного в Карсе документа до сих пор продолжает оставаться актуальным для Турции. Неслучайно, что данный вопрос в завуалированной форме нашел свое отражение в армяно-турецких протоколах, подписанных 10 октября 2009 г. в Цюрихе, которые впоследствии были отвергнуты Арменией. В протоколе «Об установлении между Республикой Армения и Республикой Турция дипломатических отношений» зафиксировано, что «подписавшие стороны переутверждают взаимное признание существующей между двумя странами границы, установленной соответствующими договорами на основе международного права». Данной формулировкой Армении фактически навязывалось окончательное признание Московского и Карсского договоров, поскольку других договоров, «устанавливающих существующую между двумя странами границу» просто не существует.

Подписание Карсского документа привело к значительным потерям армянских территорий, вызвало серьезные проблемы безопасности, демографические проблемы и

психологические комплексы, последствия которых Армения и армянский народ продолжают ощущать по сей день. Прежде, чем предпринять какие-либо шаги с целью нейтрализации тяжелых последствий Карсского документа, Армения должна провести последовательную политическую и дипломатическую работу с учетом протекающих геополитических и региональных процессов.

Не секрет, что влиятельные державы используют нормы и принципы международного права в своих интересах и целях, иногда нарушая или интерпретируя их в свою пользу. Если даже влиятельные акторы международных отношений пытаются обосновать свои действия нормами и принципами международного права, Республика Армения, как субъект этого права, просто обязана воспользоваться принципами международного права, отстаивая не только свои интересы, но и законные права всего армянского народа.

REFERENCES

1. Dashnakits' terut'yunneri` SSHM-i, AMN-i yev Mets Britaniayi ghekavameri Berłini (Potsdami) konferansë (1945 t'. hulusi 17 – õgostosi 2), Yer., 1989 (**In Armenian**).
2. Dokumenti vneshnej politiki SSSR, t. IV, M., 1960 (**In Russian**).
3. HAA, f. 113, ts'. 3, g. 21, g. 23, g. 24, g. 38, ts'. 5, g. 2, g. 3; f. 114, ts'. 1, g. 62, g. 63, g. XVIII2, ts'. 2, g. 10, g. 31, g. 62, g. 133 (**In Armenian**).
4. **Hakobyan A.**, Khorhrdayin Hayastanë Moskvayi yev Karsi paymanagerum, Yer., "Gitut'yun" hrat., 2010 (**In Armenian**).
5. Hay-t'urk'akan haraberut'yunner. Himnakhndirner yev herankarner. Khorhrdaranakan lsumner 19-20 dektemberi 2007 t'. , Yer., 2011 (**In Armenian**).
6. Hayastani Hanrapetut'yan Sahmanadrut'yun, ëndunvats 2005 t'. noyemberi 27-in (**In Armenian**).
7. Hayastanë mijazgayin divanagitut'yan yev sovetakan artak'in k'aghak'akanut'yan p'astat'ght'erum (1828-1917), khmb.` **J. Kirakosyan**, Yer., 1972 (**In Armenian**).
8. **Khach'atryan K.**, HKHSH sahmanneri harts'ë 1921 t'. khorhrda-t'urk'akan haraberut'yunneri volortum (Moskvayi yev Karsi konferansnerë), "Lraber" has. git., Yer., 2010, N 1-2 (**In Armenian**).
9. **Kirakosyan A.**, Hayastanë yev soveta-t'urk'akan haraberut'yunnerë 1945-1946 t't'. , Yer., 1970 (**In Armenian**).
10. Mezhdunarodnoje pravo v dokumentax, sost. sbornika **N. T. Blatova**, M., "Jurid. lit.", 1982 (**In Russian**).
11. **T'orikean Sh.**, Haykakan harts'ë yew mijazgayin õrënk'ë, Pëyrut', Hamazgayini Vahë Set'ean tparan, 1976 (**In Armenian**).
12. **Xarmandarjan S. V.**, Lenin I stanovlenije Zakavkazskoj Federacii, Yer., izd. "Ajastan", 1969 (**In Russian**).
13. **Xarmandarjan S. V.**, Ukreplenije Zakavkazskoj Federacii v 1922 godu, "Lraber" has. git., Yer., 1969, N 8 (**In Russian and in Armenian**).
14. **Zohrabyan E.**, Sovetakan Rusastanë yev hay-t'urk'akan haraberut'yunnerë, Yer., YEPH hrat., 1979 (**In Armenian**) .